ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆԻ ՈՒՂԵՐՁԸ

ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Սիրելի՛ երիտասարդներ, Փամբակ համայնքի սիրելի բնակիչներ, շնորհավորում եմ բոլորիդ Երիտասարդության միջազգային օրվա կապակցությամբ: Հասարակության շարժիչ ուժը երիտասարդներն են, ովքեր իրենց ողջ ներուժը ծառայեցնում են հասարակական կյանքի բոլոր ոլորտներում: Որքան առողջ է երիտասարդությունը, այնքան գործունակ է հասարակությունը:

Դուք եք մեր երկրի ապագայի ստեղծողն ու այն շենացնողը: Ձեր փոքր ու մեծ գործերից է կախված մեր գալիքը: Մեր երկրին այսօր առավել քան երբևէ անհրաժեշտ են կիրթ, բանիմաց ու պետականամետ երիտասարդներ:

Լիահույս եմ, որ դուք ձեր ողջ ուժն ու կարողությունը ներդնելու եք մեր Համայնքի ու Հայրենիքի զարգացման գործում, դառնալու եք նրա շենացման մի մասնիկը:

Սիրելի՛ երիտասարդներ, մեկ անգամ ևս շնորհավորում եմ բոլորիդ Երիտասարդության միջազգային օրվա կապակցությամբ:

Թող ձեր բոլոր օրերն անցնեն խաղաղության մեջ, ձեր միտքը ծառայի արարելու, ձեր բազուկը՝ կառուցելու համար:

Խանարհումս ձեր բոլոր այն ընկերներին, ովքեր վճռորոշ պահին Հայրենիքը գերադասեցին սեփական կյանքից:

Հարգանքներով՝ Սուրեն Կոստանդյան